




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«15» փետրվար 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-09/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի 30.01.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ խորհուրդ) ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 30.01.2017թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 12.12.2016թ. թիվ 1 որոշմամբ հրապարակվել է հրավեր:

Ընկերության կողմից Հրավերով սահմանված կարգով ներկայացվել է մասնակցության հայտ:

21.12.2016թ. Ընթացակարգի հայտերի բացման նիստի ժամանակ հաղթող են ճանաչվել «Սատար» ՀԿ-ն և «Ինտերօրթո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով չորս մասնակից՝ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն, «Սատար» ՀԿ-ն, «Ինտերօրթո» ՍՊԸ-ն և «Նոր որակ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվել «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն, «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն, Ինտերօրթո» ՍՊԸ-ն և «Նոր որակ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակվել է 23.01.2017թ. ժամը 11:00-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2017թ. թիվ 3 որոշմամբ հաստատվել է բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանվել է 2017թ. հունվարի 21-30-ը ներառյալ:

1. Անդրադառնալով բողոքի հիմքերից մեկին, Ընկերությունը նշել է, որ «Ինտերօրթո» ՍՊԸ-ին Ընթացակարգի շրջանակներում հաղթող ճանաչվելու համար հիմք է հանդիսացել գերմանական «ՕԹԹՈՒ-ԲՈԲ» ֆիրմայի կողմից թողարկվող նյութերով և գերմանական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների առաջարկը, քանի որ Ընթացակարգի Տեխնիկական-բնութագրի մեջ կատարված

հատուկ նշում և առերևույթ է, որ «Ինտերօրթո» ՍՊԸ-ին տրվել է մենաշնորհային դիրք խախտվել է հավասարության սկզբունքը, որպիսի հանգամանքն արգելվում է նաև օրենքով:

Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 12-րդ հոդվածը, որի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի և (կամ) գործառույթային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է

ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել են մրցակցության հավասար պայմանները, որը հանգեցրել է գնումների գործընթացի մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացման, քանի որ Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը պարունակում է կոնկրետ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, ծագման երկրի և կոնկրետ աղբյուրի արտադրողի պահանջ և հղում, այն դեպքում, երբ գնման առարկայի բնութագրումն առանց դրա հնարավոր է եղել, ինչպիսի պայմաններում «կամ» համարժեք» հղումն անթույլատրելի է:

Բացի այդ, հրավերի «տեխնիկական ցուցանիշներ» ցուցանիշներ տողերում գնման առարկաների բնութագիրը հստակ ներկայացված է և այս հիմքով ևս որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, ծագման երկրի և կոնկրետ աղբյուրի հղումն իրավաչափ չէ:

2. Ներկայացվող հաջորդ հիմքը այն է, որ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն հանդիսանում է հասարակական կազմակերպություն, վերջինիս ծավալած գործունեությունը վերաբերում է բացառապես այդ ոլորտին, իր գործունեությունից շահույթ ստանալու իրավունք չունի, ինչը ևս հիմք է տալիս խնդրելու Պատվիրատուին «Սատար» ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու և այդպիսի հիմքերի առկայության դեպքում համապատասխան նախաձեռնությամբ հանդես գալու համար ինչպիսի հանգամանքների հայտնումը կարող է նաև քրեական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ:

3. Բացի այդ, «Սատար» ՀԿ-ն չի ապահովում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, այն է՝ մասնակիցը պետք է

բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 29-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կարգի 71-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) տվյալ մասնակցի հայտը մերժվում է.

2) մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

4. Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացնելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հասարակական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման, տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրագումարային գործունեություն իրականացնելու նպատակներով:

Բացառապես նշված պահանջների բավարարման դեպքում միայն կարող է մասնակցի որակավորումը գնահատվել բավարար, ինչը «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն չի կարող ապահովել, մասնավորապես՝ ՀԿ-ն չունի մանագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, պարզ չէ, թե հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիներին այդ կազմակերպությունն ընդհանրապես հիմնադրված է եղել, թե ոչ, ինչպիսի հարկման դաշտով է հարկվում, ինչ համախառն եկամտի մասին կարող է խոսք լինել, եթե առևտրային գործունեություն չի կարող իրականացնել և որ ամենակարևորն է, հավելված 4-ի համաձայն՝ գին առաջարկելիս որպես պարտադիր պայման պետք է ներկայացնի ապրանքի ինքնարժեքի, շահույթի և հարկման տեսակի՝ չափի մասին տեղեկություններ:

Հարց է առաջանում, որպես հասարակական կազմակերպություն ինչպիսի հարկ վճարող է համարվում, որի համախառն եկամուտը բավարարում է առաջադրված պայմաններին և հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում մատուցված ծառայությունների ծավալը պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Ընթացակարգի մասնակիցների կողմից գնման ընթացակարգով ներկայացված փաթեթների պատճեններն ամբողջությամբ ստանալուց հետո Ընկերությունը կանդադառնա նաև Ընթացակարգի մասնակիցների կողմից գնման առարկաների վերաբերյալ ներկայացված տեխնիկական բնութագրերին, որոնց համապատասխանության ստուգման հնարավորությունը բոլորը ներկայացնելու պահին Ընկերությունը չունի:

Ելնելով նշված փաստական հանգամանքներից և իրավական հիմնավորումներից՝ Ընկերությունը գտնում է, որ ինչպես ներկայացված հրավերով, այնպես էլ ընթացակարգի արդյունքները գնահատելիս՝ թույլ են տրվել խախտումներ, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2016թ. հայտերի բացման նիստով արձանագրված արդյունքները օրինական չեն կարող դիտվել:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել Ընթացակարգի շրջանակներում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումները, այդ թվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը, չեղյալ համարել 21.12.2016թ. «ԱՍՀՆ-ՇՀԾԶԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստով արձանագրված արդյունքները՝ վերացնել հնարավոր իրավական հետևանքները (չեղյալ համարել կնքված պայմանագրերը):

2. Ձեռնարկել համապատասխան միջոցներ մասնակցին «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3. Տրամադրել Ընթացակարգի մասնակիցների կողմից գնման ընթացակարգով ներկայացված փաթեթների պատճեններն ամբողջությամբ:

4. Տրամադրել «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ին՝ որպես մատակարարի, գրանցման համակարգում գնումների գործընթացին մասնակցության համար իրավունք վերապահող հիմքերի՝ փաստաթղթերի պատճենները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-09/17 բողոքը քննող հանձնաժողովի 03.02.2017թ. ժամը 16:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, որոնք պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և դիրքորոշումը.

«Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն, որպես ԳԲԽ-09/17 բողոքով ներգրավված երրորդ կողմ, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-09/17 բողոքը քննող հանձնաժողովին ուղղված 06.02.2017թ. թիվ 012 գրությամբ հայտնել է հետևյալը.

1.«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի պահանջն այն մասին, որ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ին ներառեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում հիմնավորված չէ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք և գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն ՀՀ կառավարության որոշմամբ եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

2. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 30.01.2017թ. ընդունել է «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր բողոքը, որի առարկան և պահանջը նույն բովանդակությամբ է, ինչ 29.12.2016թ. ներկայացվածը, որը մերժվել է 17.01.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ 128/16 որոշմամբ: Փաստորեն «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն որպես այդպիսին նոր բողոք չի ներկայացնում, այլ բողոքարկում է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ 128/16 որոշումը, իսկ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր անձ

իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

3. «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն որևէ իրավական հիմք չի ներկայացրել իր բողոքում և չի կարող պահանջել դադարեցնելու գնումների ընթացակարգի պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումները:

Վերոհիշյալ գրությամբ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է մերժել «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի 30.01.2017թ. բողոքը:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 03.02.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ/1138-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար՝ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 12.12.2016թ.-ին հայտարարվել է շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, գնահատող հանձնաժողովի կողմից գնման հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 21.12.2016թ.-ի ժամը 11:00-ն: Գնման ընթացակարգի շրջանակներում հայտ են ներկայացրել 4 մասնակից՝ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն, «Ինտերօրթո» ՍՊԸ-ն, «Նոր որակ» ՍՊԸ-ն և «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն:

«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ Պատվիրատուն հայտնել է, որ հաստատված գնման հայտով ներկայացված և գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում «Օթթո-Բոք» ֆիրմայի կողմից թողարկվող նյութերին հղման հետ միաժամանակ առկա է եղել «կամ համարժեք» բառակապակցությունը: Մինևույն ժամանակ պատասխանատու ստորաբաժանման պնդմամբ՝ առանց վերոնշյալ հղման հնարավոր չէ լիարժեք սահմանել պահանջվող ծառայության նկարագիրը: Հարկ է նաև նշել, որ վերոնշյալ հղումը որևէ կերպ չի կարող հանգեցնել մենաշնորհի կամ անհավասար մրցակցային

պայմանների առաջացմանը: Նույն «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն թե՛ 2016 և թե՛ 2017 թվականի համար հայտարարված գնման ընթացակարգերին ներկայացրել է գնային առաջարկ վերոնշյալ տեխնիկական բնութագրերով սահմանված ծառայությունների համար և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-09/17 բողոքը քննող հանձնաժողովի 03.02.2017թ. ժամը 16:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Պատվիրատուի կողմից թույլ չեն տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, քանի որ Ընթացակարգը կազմակերպվել է պատշաճ ձևով:

4. ԳԲԽ-09/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-09/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 81-106-րդ չափաբաժինների նկարագրությունը պարունակում է հղում «ՕԹԹՈՒ-ԲՈԲ» ֆիրմային անվանմանը, **որի մոտ նշվել է «կամ համարժեք» բառերը:**

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել թվով 4 մասնակից, այդ թվում նաև՝ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն և «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2017թ. արձանագրությամբ կայացրած որոշմամբ Ընթացակարգի համապատասխան չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվել «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն, «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն, «Ինտերօրթո» ՍՊԸ-ն և «Նոր Որակ» ՍՊԸ-ն:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2017թ. թիվ 3 որոշմամբ հրապարակվել է «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը:

6. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 18.01.2017թ. թիվ 01/04.1/115-17 գրությամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, թե արդյոք հասարակական կազմակերպությունը, առանց առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու, իրավունք ունի անմիջականորեն մասնակցել գնումների գործընթացին (հանդես գալ որպես մատակարար, ծառայություն մատուցող և այլն), ստանալ շահույթ, թե ոչ:

7. Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրությանը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը 01.02.2017թ. թիվ 10/25.3/129617 գրությամբ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված է ընդհանուր իրավակարգավորում, որը վերաբերում է գնումների գործընթացին մասնակցելու հավասար իրավունքին, իսկ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված է բացառիկ իրավակարգավորում, որ հասարակական կազմակերպությունները ձեռնարկատիրական գործունեություն կարող են իրականացնել միայն առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով:

Հետևաբար հասարակական կազմակերպությունները ձեռնարկատիրական գործունեություն կարող են իրականացնել միայն առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով:

5. ԳԲԽ-09/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի 30.01.2017թ. բողոքը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 03.02.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ/1138-17 գրությունը և կից փաստաթղթերը, «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, ՀՀ արդարադատության նախարարության 01.02.2017թ. թիվ 10/25.3/129617 գրությունը՝ հայտնում է հետևյալը:

1. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող

նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: **Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից Պատվիրատուի կարիքների համար կազմակերպված «ԱՍՀՆ-ՇՀԾԶԲ-17/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ընթացակարգի 81-106-րդ չափաբաժինների նկարագրության մեջ գերմանական «ՕԹԹՈՒ-ԲՈՔ» ֆիրմայի կողմից թողարկվող նյութերին հղում կատարելու հետ մեկտեղ նախատեսվել են **«կամ համարժեք» բառերը:**

Ինչպես արդեն նշվել է, Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: **Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:**

Այսպիսով, Օրենքի վերոհիշյալ հոդվածը հստակ սահմանում է, որ հրավերի տեխնիկական բնութագրում պետք է նախատեսվեն «կամ համարժեք» բառերը՝ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին՝ հղում կատարելու պայմաններում, որպիսի պահանջը, Կենտրոնը գտնում է, որ պահպանվել է Պատվիրատուի կողմից հայտարարված հրավերի տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցի մեջ, ուստի Պատվիրատուի կողմից այս մասով թույլ չի տրվել

Օրենքի պահանջների խախտում, հետևաբար բողոքը սույն մասով ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը իր 17.01.2017թ. թիվ 128/16 որոշմամբ արդեն իսկ նմանատիպ դիրքորոշում է հայտնել վերոհիշյալ հարցի կապակցությամբ:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված ցուցակը հրապարակում է լիազորված մարմինը: **Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում:** Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո, գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով՝ ելնելով սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված պայմանների խախտման ծանրությունից:

Օրենքի 2-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ լիազորված մարմին հանդիսանում է պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմինը:

Կարգի 122-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ լիազոր մարմնի կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու նպատակով գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դիմում է կենտրոնին՝ առաջարկելով ուսումնասիրել ներկայացված նյութերը և հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

Ինչ վերաբերում է «Սատար» ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Խորհրդի կողմից որոշում կայացնելու վերաբերյալ Ընկերության պահանջին, ապա հայտնում ենք, որ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում սահմանված կարգով նախաձեռնում է **լիազորված մարմինը**, ինչը տվյալ դեպքում առկա չէ, հետևաբար սույն մասով բողոքը ևս ենթակա է մերժման:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումը՝ պատվիրատուի հատուցմամբ նյութական և ոչ նյութական ակտիվների (արժեքների)՝ բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է: Սույն օրենքի իմաստով՝

ա. ծառայության ձեռքբերում է նաև լիզինգը.

բ. գնում է նաև՝

- պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը,

- փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը,

- պետական և մասնավոր հատվածների գործընկերության, ներառյալ հավատարմագրային կառավարման և կոնցեսիայի գործարքները.

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (հղումը կատարված է մինչև 04.02.2017թ. գործող «Հասարակական կազմակերպությունների մասին» թիվ

ՀՕ-268 օրենքին) 3-րդ հոդվածի 1-ին մասը **հասարակական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝** հասարակական միավորման, տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել միայն առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով:**

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կազմակերպության կողմից օրենքների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է **պետական Հայաստանի Հանրապետության արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը**, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասություններին և ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 18.01.2017թ. թիվ 01/04.1/115-17 գրությամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, թե արդյոք հասարակական կազմակերպությունը, առանց առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու, իրավունք ունի անմիջականորեն մասնակցել գնումների գործընթացին (հանդես գալ որպես մատակարար, ծառայություն մատուցող և այլն), ստանալ շահույթ, թե ոչ:

Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրությանը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը 01.02.2017թ. թիվ 10/25.3/129617 գրությամբ հայտնել է, որ **«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված է ընդհանուր իրավակարգավորում,**

որը վերաբերում է գնումների գործընթացին մասնակցելու հավասար իրավունքին, իսկ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված է բացառիկ իրավակարգավորում, որ հասարակական կազմակերպությունները ձեռնարկափրական գործունեություն կարող են իրականացնել միայն առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով:

Հետևաբար հասարակական կազմակերպությունները ձեռնարկափրական գործունեություն կարող են իրականացնել միայն առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով:

Այսպիսով, հաշվի առնելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության՝ որպես հասարակական կազմակերպության կողմից օրենքների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնող պետական լիզորված մարմնի կողմից 01.02.2017թ. թիվ 10/25.3/129617 գրությամբ հայտնած դիրքորոշումը՝ Կենտրոնը գտնում է, որ «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն, որպես հասարակական կազմակերպություն չի կարող անմիջականորեն մասնակցել գնումների գործընթացին առանց առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով: Ուստի գտնում ենք, որ բողոքը այդ հիմքով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է **ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով**: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

«Սատար» Հաշմանդամների ՀԿ-ի կողմից «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկի «Շահույթ» դաշտը չի լրացվել:

Կարգի 45-րդ կետը սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, **բացառությամբ այն դեպքերի**, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ **գնային առաջարկը** կամ հայտի ապահովումը **ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան**, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ի՝ որպես մատակարարի գրանցման համակարգում գնումների գործընթացին մասնակցելու համար իրավունք վերապահող փաստաթղթերը տրամադրելու վերաբերյալ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված պահանջին, ապա հայտնում ենք, որ նման պահանջը դուրս է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված լիազորությունների շրջանակից:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից 30.01.2017թ. ներկայացված բողոքը ենթակա է մասնակի բավարարման:

Ուստի ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում ենք Ընկերության բողոքը բավարարել մասնակի՝

«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի 30.01.2017թ. ներկայացրած բողոքը մասնակի բավարարել:

ա) դադարեցնել «ԱՍՀՆ-ՇՀԾԶԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2017թ. արձանագրությունը՝ «Սատար»

հաշմանդամների ՀԿ-ին համապատասխան չափաբաժինների մասով 1-ին տեղ
զբաղեցրած մասնակից ճանաչելու մասով.

բ) դադարեցնել «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի
արդյունքերով պայմանագիր կնքելու մասին ընթացակարգի գնահատող
հանձնաժողովի 24.01.2017թ. թիվ 3 որոշումը՝ «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի
մասով:

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
սահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-09/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան